# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՅՈՒՂԿՈՈՊ)

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

3 1 JAN 2018

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՅՈՒՂԿՈՈՊ)

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1939

Թարգմ. Կ. ՆԱՐԱԳՅԱՆ
Խմբագ. Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Տեխ-խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ Լ. ՄՈՒԹԱՖՅԱՆ

1-3673 դր

Գլավլիտ 1686 պատվեր № 110 տիրաժ 2000
Մանկ. հրատուսի տպարան Մարքսի փողոց № 17 Երևան 1939 թ.

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ________ ________ Հանրապետության (երկրի, մարզի) ________ շրջանի ________ ________ գյուղում, գյուղերում (ստանիցայում, ղշլաղում, աուլում) ապրող քաղաքացիները կամավոր կերպով միանում են ________ ________ գյուղական սպառողական ընկերությունում (գյուղկոոպում) ընդհանուր ուժերով և միջոցներով «Խորհրդային առևտուր՝ առանց փոքր ու մեծ կապիտալիստների, առևտուր՝ առանց փոքր ու մեծ սպեկուլյանտների» (Ստալին) կազմակերպելու համար։

Գյուղում կոլտնտեսային կարգի վերջնական և լիակատար հաղթանակի, կոլտնտեսականների ունևորության և կուլտուրական պահանջների անընդհատ աճի պայմաններում, Գյուղկոոպն իրեն խնդիր է դնում բավարարելու կոլտնտեսականների և բոլոր աշխատավորների աճող պահանջը նրանց պետքական ապրանքների և դրանով իսկ նպաստելու կոլտնտեսական կարգի աճմանն ու ծաղկմանը։

2. Մասնանշված խնդիրներն իրականացնելու համար գյուղկոոպը բաց է անում մագազիններ, խանութներ, կիոսկներ, ·կազմակերպում է արդյունաբերական և պարենային ապրանքների տեղափոխումը, սպառողներին վաճառելու համար։

Պահանջների ուսումնասիրման հիման վրա կատարում է ապրանքների գնումը իր միությունից, պետական և կոոպերատիվ կազմակերպություններից՝ կատարում է գյուղատնտեսական մթերքների, հումույթի և տնայնագործական արտադրանքի մթերում պետական առաջադրանքներով, իր միության և այլ կազմակերպությունների հանձնարարությամբ և նրանց հետ կնքած պայմանագրերի համաձայն։ Այդ նպատակների համար կազմակերպում է մթերված մթերքների ընդունման, տեսակավորման և պահպանման համար կայաններ, ինչպես նաև նրանց մշակման համար ձեռնարկություններ. կազմակերպում է ռեստորաններ թեյարաններ, ճաշարաններ, փռեր և այլն։ Արտադրական ձեռնարկություններ (պաղպաղակի, կալբասի և կվասի արտադրություն և այլն)։

3. Գյուղկոոպն իր աշխատանքը վարում է տնտեսական հաշվարկի հիման վրա, խստորեն պահպանելով պետության կողմից սահմանված գները։

Գյուղկոոպի ամբողջ աշխատանքը կառուցվում է պլանի հիման վրա, որը կազմվում է



շրջսպառկոոպմիության առաջադրանքներով և հաստատվում է փայատերերի ընդհանուր ժողովի կողմից (լիազորների ժողովի կողմից)։

Գյուղկոոպում հաշվառումը և հաշվետվությունը տարվում է Ցենտրոսոյուզի կողմից սահմանված ձևերով ու կարգով։

4. Գյուղկոոպն օգտվում է իրավաբանական անձի իրավունքներով և իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերել և օտարացնել գույքեր, կառուցել և սարքավորել մագազիններ, խանութներ, պահեստներ և այլ ձեռնարկություններ, ձեռք բերել փոխադրական միջոցներ, կնքել պայմանագրեր, տալ հավատարմագրեր, հայցեր հարուցել և պատասխանել դատական մարմիններում։

5. Գյուղկոոպը մտնում է ____________________

____________________ սպառողական ընկերությունների միության մեջ որպես անդամ։

6. Գյուղկոոպի վարչությունը գտնվում է

____________________________________

7. Գյուղկոոպն ունի իր անվանյալ կնիքը։

## II. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

8. Գյուղկոոպի անդամներ կարող են լինել 16 տարեկանին հասած յերկու սեռի բոլոր քաղաքացիները, բացառությամբ ընտրական իրավունքից զրկված անձերից։

9. Գյուղկոոպի անդամ դառնալ ցանկացող յուրաքանչյուր քաղաքացի, կանոնադրության հետ ծանոթանալուց հետո դիմում է տալիս վարչության իրեն գյուղկոոպի անդամ ընդունելու մասին։

10. Գյուղկոոպի անդամների ընդունումը կատարվում է փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) կողմից, որը հաստատում է վարչության կողմից մտցրած նոր անդամների ցուցակը։

11. Գյուղկոոպի մեջ ընդունված յուրաքանչյուր անդամ մուծում է մուտքի վճար 3 ռուբ. չափով և փայավճար ——————— ռուբ. չափով (հաստատվում է փայատերերի ընդհանուր ժողովի կողմից կամ լիազորների ժողովի կողմից, բայց 50. ռուբ. ոչ ցածր)։

12. Փայատերերի ընտանիքի այն անդամների համար, որոնք չունեն ինքնուրույն վաստակ. փայավճարի չափը սահմանվում է ——— ռուբլի (11-րդ հոդվածում սահմանված փայավճարի մեկ քառորդ մասը)։

13. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամին ընդունելիս տրվում է անդամագրքույկ։

14. Նոր ընդունված անդամներին, գյուղկոոպի վարչության որոշումով, կարող են նշանակվել փայավճարները մաս-մաս մուծելու ժամկետներ, 2 տարուց ոչ ավել ժամկետով։



15. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ պարտավորվում է խստորեն խնամել և պահպանել կոոպերատիվ գույքը, ակտիվ կերպով մասնակցել գյուղկոոպի աշխատանքներին, օգնել նրա վարչության և վերստուգիչ հանձնաժողովին և աջակցել կոոպերատիվ տնտեսության ընդհանուր բարելավման ու ամրացման։

16. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի՝

ա) վճռական ձայնով մասնակցել գյուղկոոպի գործունեության բոլոր հարցերի քննարկման համար հրավիրված փայատերերի ընդհանուր ժողովին։

բ) Ընտրել և ընտրվել վարչությունում և վերստուգիչ հանձնաժողովում ինչպես նաև գյուղկոոպի և նրա միության լիազորների կազմում։

գ) Գյուղկոոպի վարչության միջոցով մտցնել փայատերերի ընդհանուր ժողովի քննարկմանը գյուղկոոպի գործունեության բարելավման ուղղությամբ հարցեր (ոչ ուշ քան 3 օր առաջ մինչ ժողովի օրը)։

դ) Պահանջել հերթից դուրս փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) հրավիրումը։

ե) Օգտագործել գյուղկոոպի կուլտ-լուսավորական և կուլտ-կենցաղային ձեռնարկումները (կինո, կարմիր անկյուն, մանկամսուր և այլն)։

դ) Ստանալ փայատերերի ընդհանուր ժողովի կողմից (լիազորների ժողովի կողմից) սահմանված փայամուծումների մասհանումը (սույն կանոնադրության 54-րդ հոդվածի «ա» կետը)։

ե) Օգտվել ապրանքների ձեռք բերման նախապատվության իրավունքով, այն ապրանքների նկատմամբ, վորոնց վերաբերմամբ փայատերերի ընդհանուր ժողովի կողմից (լիազորների ժողովի կողմից) սահմանված ե փայատերերին նախապատվություն գյուղկոոպի վոչ անդամների հանդեպ։

17. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ գյուղկոոպի պարտավորությունների համար կրում ե պատասխանատվություն կանոնադրական փայի (սույն կանոնադրության 11 և 12 հոդվածները) սահմաններում։

18. Փայավճարների փոխանցումը չի թույլատրվում։ Գյուղկոոպի անդամը մահանալու դեպքում նրա փայավճարը անցնում ե ընտանիքի անդամներին, ժառանգության մասին օրենքով սահմանված կարգով։

Գյուղկոոպի անդամը բնակավայրը փոխելիս, նրա փայավճարը գյուղկոոպի վարչության կողմից փոխանցվում ե նոր բնակավայրը։

Գյուղկոոպի անդամի փայավճարը չի կարող վերցվել նրա պարտքը մարելու համար, բա-



ցի այն դեպքերից, յերբ այդ կատարվում ե դատարանի վորոշման համաձայն։

19. Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ պարտավոր ե յենթարկվել գյուղկոոպի կանոնադրության ե փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) վորոշումներին։

20. Գյուղկոոպի կանոնադրությունը և ընդհանուր ժողովի վորոշումները խախտող գյուղկոոպ անդամների նկատմամբ կիրառվում են հասարակական ներգործման միջոցներ (նախազգուշացում, հասարակական պարսավանք)։ Գյուղկոոպի այն անդամների նկատմամբ, վորոնք չեն ուղղվում նրանց վերաբերմամբ հասարակական ներգործման միջոցների կիրառումից հետո և շարունակում են խախտել կանոնադրությունը և ընդհանուր ժողովի վորոշումները, կարող ե կիրառվել, վորպես ծայրահեղ միջոց գյուղկոոպի անդամությունից հեռացնելը։

Գյուղկոոպի անդամների թվից կարող են հեռացվել միմիայն փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) վորոշումով, վորտեղ մասնակցում ե փայատերերի (լիազորների) ընդհանուր թվի վոչ պակաս $^3/_4$-ը։

Փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) արձանագրության մեջ անպայման ցույց ե տրվում ժողովին ներկա յեղող գյուղկոոպ անդամների թիվը և հեռացման համար կողմ քվեարկողների թիվը։

Գյուղկոոպի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իրեն հեռացման վորոշման մասին բողոքարկել սպառողական ընկերությունների վերադաս միությանը։

Հեռացման մասին բողոքները այդ միության կողմից լուծվում են բողոքողի և գյուղկոոպի վարչության նախագահի պարտադիր ներկայությամբ։

Գյուղկոոպի անդամների թվից անպայմանորեն հեռացվում են այն անդամները, վորոնք ապրանքներ են գնում վոչ թե իրենց կարիքների համար, այլ սպեկուլյացիայի նպատակով։

21. Գյուղկոոպի անդամը իրավունք ունի դուրս գալ գյուղկոոպից։ Դուրս գալիս փայավճարը չենթակա յե վերադարձման յերեք ամսըվա ժամկետում փայատերերի ընդհանուր ժողովի կողմից (լիազորների ժողովի կողմից) քըննըվելուց և հաստատվելուց հետո, գյուղկոոպի այն տարվա տարեկան հաշվետվությունը, վորի ընթացքում փայատերը ավել է իր դիմումը դուրս գալու մասին։

## III. ԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### Ա. Փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը)

22. Գյուղկոոպի կառավարման բարձրագույն մարմինը հանդիսանում է փայատերերի ընդհանուր ժողովը։



Մի քանի կետերի սպասարկող գյուղկոոպում, ինչպես նաև ըստ գյուղկոոպի փայատերերի թվի խոշոր գյուղկոոպում, վորտեղ դժվար է փայատերերի ընդհանուր ժողովի հրավիրումը, փայատերերի ընդհանուր ժողովը շրջապատկոոպմիության թույլտվությամբ կարող է փոխարինվել լիազորների ժողովով։

Լիազորների ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ ըստ առանձին բնակելի կետերի (կամ ըստ թաղամասերի) գյուղկոոպի անդամների ընդհանուր տեղամասային ժողովներում, մեկ տարի ժամկետով։

Ընտրությունները կատարվում են, յելնելով այն նորմայից, վորը կապահովի լիազորների ժողովում վոչ պակաս քան 100 մարդու մասնակցությունը։

Լիազորների ընտրության համար նորման սահմանվում է վերադաս կոոպերատիվ կազմակերպության կողմից։

23. Փայատերերի ընդհանուր ժողովը՝ (լիազորների ժողովը)՝

ա) ընդունում է կանոնադրությունը, նրա փոփոխությունները ու լրացումները, ինչպես նաև վորոշում է գյուղկոոպը միացնելու կամ անջատելու հարցը։

բ) Ընտրում է փակ (գաղտնի) քվեարկությամբ յերկու տարի ժամկետով գյուղկոոպի

վարչության անդամներին և վարչության նախագահին, ինչպես նաև վերստուգիչ հանձնաժողովի անդամներին ու նախագահին։

գ) Հաստատում է նակազ (հրահանգ) վարչության համար, վորի մեջ սահմանվում են գյուղկոոպի աշխատանքների բարելավման հիմնական միջոցառումները։

դ) Հաստատում է գյուղկոոպում անդամների ընդունումը (հոդված 10) և վորոշում է գյուղկոոպի անդամի հեռացման հարցը (սույն կանոնադրության 20 հոդվածը)։

յե) Քննում է ու հաստատում յեռամսյակային և տարեկան տնտեսական պլանները և յեկամուտների ու ծախքերի նախահաշիվները, շինարարության և հիմնական նորոգման պլանները, ինչպես նաև շինություններ և այլ տեսակի հիմնական միջոցներ ձեռք բերելու և վաճառելու հարցերը։

զ) Վորոշում է նոր առևտրական և այլ ձեռնարկություններ բացելու և յեղածները փակելու մասին հարցերը։

ե) Քննում է ու հաստատում գյուղկոոպի յեռամսյակային ու տարեկան հաշվետվությունները և նրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը։

ը) Տալիս է վարչության և վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքի գնահատականը։



թ) Հաստատում է օգուտների բաշխումը և ֆոնդերը ծածկելու կարգը (սույն կանոնադրության VI հատվածը)։

ժ) Քննում է վարչության և վերստուգիչ հանձնաժողովի վոչ ճիշտ գործողությունների մասին բողոքները և հանում է վորոշումներ այդ բողոքների վերաբերյալ։

ժա) Վորոշում է գյուղկոոպի ընտրված անձերին աշխատանքի մեջ թերանալու և կանոնադրությունը խախտելու համար պատասխանատվության կանչելու հարցը։

ժբ) Վատ աշխատանքի համար ժամկետից շուտ զրկում է լիազորությունից վարչությանը և վերստուգիչ հանձնաժողովին ամբողջովին կամ վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի առանձին անդամներին։

ժգ) Հաստատում է գյուղկոոպի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նախագահի ու անդամների, ինչպես նաև գյուղկոոպի առանձին աշխատողների պարգևատրումը լավ աշխատանքի համար։

ժդ) Հաստատում է խանութային հանձնաժողովների կազմը։

24. Փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) վարչության կողմից հրավիրվում է վոչ պակաս յեռամսյակում մեկ անգամ։

25. Վարչությունը պարտավոր է նաև հրա-

վիրել փայատերերի ընդհանուր ժողով (լիազորների ժողով) յեթե այդ կպահանջեն՝

ա) գյուղկոոպի անդամների (լիազորների) վոչ պակաս քան $^1/_{10}$ մասը։

բ) Վերստուգիչ հանձնաժողովը։

գ) Վերադաս կոոպերատիվ կազմակերպության վարչությունը։

26. Վարչությունը պարտավոր է հրավիրել փայատերերի ընդհանուր ժողով (լիազորների ժողով), վոչ ուշ քան 25-րդ հոդվածում մատնանշված պահանջը ստանալուց 15 որ հետո։ Վարչության կողմից այդ ժամկետը խախտելու դեպքում, փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) հրավիրվում է շրջպառկոոպմիության կողմից։

27. Փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) օրինական է գյուղկոոպի անդամների (լիազորների) թվի վոչ պակաս $^2/_3$-ի առկայության դեպքում։

Կանոնադրության փոփոխման և լրացման, գյուղկոոպի անդամների հեռացման, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ընտրության մասին հարցերը վորոշելու համար, ինչպես նաև ոգուտների բաշխման կամ վնասների ծածկման համար պահանջվում է գյուղկոոպի անդամների (լիազորների) թվի վոչ պակաս $^3/_4$-ի մասնակցությունը ժողովում։



28. Փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

29. Ժողովը վարելու համար ընտրվում է ժողովի նախագահություն բաց քվեարկությամբ։

Ժողովի վորոշումները գրվում են արձանագրության մեջ։ Արձանագրությունն ստորագրվում է ժողովի նախագահության կողմից։

Արձանագրությունը ժողովին ներկա յեղողների ցուցակի հետ միասին պահվում է գյուղկոոպի վարչության գործերում։

### Բ. Գյուղական Սպառողական ընկերության վարչությունը

30. Գյուղկոոպի գործերը վարելու համար փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) 2 տարի ժամկետով ընտրում է վարչություն 5-7 մարդու կազմով, այդ թվում վարչության նախագահը։ (Սույն կանոնադրության 23-րդ հոդվածի «բ» կետը)։

31. Գյուղկոոպի վարչությունը հանդիսանում է Սպառողական ընկերության գործադիր մարմինը, կյանքում կիրառում է փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) բոլոր վորոշումները և պատասխանատու յե նրանց առաջ և վերադաս կոոպերատիվ կազմակեր-

վիրել փայատերերի ընդհանուր ժողով (լիազորների ժողով) յեթե այդ կպահանջեն՝

ա) գյուղկոոպի անդամների (լիազորների) վոչ պակաս քան $^{1}/_{10}$ մասը։

բ) Վերստուգիչ հանձնաժողովը։

գ) Վերադաս կոոպերատիվ կազմակերպության վարչությունը։

26. Վարչությունը պարտավոր է հրավիրել փայատերերի ընդհանուր ժողով (լիազորների ժողով), վոչ ուշ քան 25-րդ հոդվածում մատնանշված պահանջը ստանալուց 15 որ հետո։ Վարչության կողմից այդ ժամկետը խախտելու դեպքում, փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) հրավիրվում է շրջսպառկոոպմիության կողմից։

27. Փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) որինական է գյուղկոոպի անդամների (լիազորների) թվի վոչ պակաս $^{2}/_{3}$-ի առկայության դեպքում։

Կանոնադրության փոփոխման և լրացման, գյուղկոոպի անդամների հեռացման, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ընտրության մասին հարցերը վորոշելու համար, ինչպես նաև ոգուտների բաշխման կամ փաների ծածկման համար պահանջվում է գյուղկոոպի անդամների (լիազորների) թվի վոչ պակաս $^{3}/_{4}$-ի մասնակցությունը ժողովում։



28. Փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) վորոշումները ընդունվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

29. Ժողովը վարելու համար ընտրվում է ժողովի նախագահություն բաց քվեարկությամբ։

Ժողովի վորոշումները գրվում են արձանագրության մեջ։ Արձանագրությունն ստորագրվում է ժողովի նախագահության կողմից։

Արձանագրությունը ժողովին ներկա յեղողների ցուցակի հետ միասին պահվում է գյուղկոոպի վարչության գործերում։

### Բ. Գյուղական Սպառողական ընկերության վաչությունը

30. Գյուղկոոպի գործերը վարելու համար փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) 2 տարի ժամկետով ընտրում է վարչություն 5-7 մարդու կազմով, այդ թվում վարչության նախագահը։ (Սույն կանոնադրության 23-րդ հոդվածի «բ» կետը)։

31. Գյուղկոոպի վարչությունը հանդիսանում է Սպառողական ընկերության գործադիր մարմինը, կյանքում կիրառում է փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) բոլոր վորոշումները և պատասխանատու յե նրանց առաջ և վերադաս կոոպերատիվ կազմակեր-

պությունների առաջ գյուղկոոպի ամբողջ աշխատանքի համար։

Վարչությունն աշխատում է փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) կողմից հաստատված նախագծի (հրահանգների) հիման վրա։

32. Վարչությունը կնքում է պայմանագրեր, տալիս է պարտավորագրեր և հավատարմագրեր գյուղկոոպի անունից և նրա գործերի վերաբերյալ, պահպանում է գյուղկոոպին պատկանող գույքերն ու արժեքները և կատարում է գյուղկոոպի կանոնադրությամբ և նախագծով (հրահանգներով) նախատեսված այլ պարտականությունները։

33. Վարչության նախագահը պարտավոր է հավաքել վարչությունը վոչ պակաս ամիսը յերկու անգամ։

Վարչության վորոշումները գրանցվում են արձանագրությունների գրքում։

Վարչության արձանագրությունները ստորագրվում են վարչության նախագահի և նիստին ներկա յեղած վարչության անդամների կողմից։

Վարչության այս կամ այն վորոշումներին համաձայն չեղող վարչության անդամն իրավունք ունի գրելու իր հատուկ կարծիքը։

34. Վարչության նիստերը բաց են գյուղկոոպի բոլոր անդամների համար։

35. Գյուղկոոպի ծառայողների ընդունումն



ու արձակումը կատարվում է վարչության նախագահի կողմից, հետագայում հաստատվելով վարչության նիստում։

Գյուղ խանութների գիրեկտորները և խանութների վարիչները ընդունվում և արձակվում են վարչության կողմից, հետագայում հաստատվելով փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) կողմից։

1-36738

36. Գյուղկոոպի կողմից տրված բոլոր դրամական փաստաթղթերը և պարտավորագրերը (պայմանագրեր, հավատարմագրեր և այլն) վավերական են միայն գյուղկոոպի վարչության նախագահի և հաշվապահի (հաշվետարի) կողմից ստորագրված լինելու դեպքում։

37. Վարչության նախագահի յերկարատեվ բացակայության դեպքում (հիվանդության, արձակուրդ, յերկարատեվ գործուղում), դրամական փաստաթղթերը և պարտավորագրերը ստորագրելու իրավունքը դրվում է գյուղկոոպի վարչության նախագահի տեղակալի վրա, վորը պետք է ձեվակերպված լինի գյուղկոոպի վարչության հատուկ վորոշմամբ։

38. Գյուղկոոպի գործունեյությունից բղխող բոլոր ծախսերը կատարվում են փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) կողմից հաստատված նորմաների և ծախսերի նախահաշվի համաձայն։

ԳՐԱԴԱՐԱՆ

39. Գյուղկոոպի վարչությունը պատասխանատվություն է կրում իրեն վստահած գյուղկոոպի գույքի և միջոցների պահպանման համար, ինչպես նաև իր գործունեության ու կարգադրությունների ճշտության համար։

## IV· ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

40. Գյուղկոոպի վարչության գործունեության ստուգման համար փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) ընտրում է 2 տարի ժամկետով, 3—5 հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողով, այդ թվում վերըստուգիչ հանձնաժողովի նախագահին։ Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության համար հաշվետու յե փայատերերի ընդհանուր ժողովին (լիազորների ժողովին)։

41. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է գյուղկոոպի վարչության տնտեսական և ֆինանսական ամբողջ գործունեությունը, նույնպես և կատարում է գյուղկոոպի բոլոր ձեռնարկությունների ռեվիզիան Ցենտրոսոյուզի կողմից հաստատված կանոնադրության համաձայն։

42. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են գյուղկոոպի վարչության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։

43. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կողմից ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ։



44. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերում ընդունված որոշումները գրանցվում են վերըստուգիչ հանձնաժողովի արձանագրությունների գրքում և հաղորդվում են գյուղկոոպի վարչությանն ու շրջսպառկոոպմիության վարչությանը։

Եթե գյուղկոոպի վարչությունը վերստուգիչ հանձնաժողովի որոշումները չի քննարկում ստանալուց 10 օրվա ընթացքում, ապա նա դառնում է պարտադիր կատարման համար

Վերստուգիչ հանձնաժողովի այս կամ այն որոշմանը համաձայն չեղող վերստուգիչ հանձնաժողովի անդամն իրավունք ունի գրելու իր հատուկ կարծիքը։

45. Գյուղկոոպի վարչության աշխատանքներում վերստուգիչ հանձնաժողովի կողմից չարաշահություն հայտնաբերելու դեպքում

վերստուգիչ հանձնաժողովը պետք է վարչությունից պահանջի հրավիրել գյուղկոոպի անդամների արտակարգ ընդհանուր ժողով (սույն կանոնադրության 25 և 26 հոդվածները) և անհապաղ տեղեկացնի այդ մասին շրջսպառկոոպմիության վարչությանը։

46. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն կարող լինել գյուղկոոպի վարչության անդամների մոտիկ ազգականներ հանդիսացող անձնավորությունները, ինչպես նաև տվյալ գյուղկոոպի վարձու աշխատողները։

յե) Գյուղկոոպի լավագույն աշխատողների պարգևատրման համար։

գ Ոգուտների մնացած մասը, բայց ոչ պակաս 50 %-ից, մտնում է հիմնական ֆոնդ։

55. Վնասներն ըստ տարեկան հաշվետվության ծածկվում են գյուղկոոպի հիմնական ֆոնդի միջոցներից։

56. Ըստ տարեկան հաշվետվության յեղած վնասների ծածկման համար հիմնական ֆոնդի անբավարար լինելու դեպքում, վնասների մնացած մասի ծածկման համար կարելի յե գործադրել փայատիրական ֆոնդի միջոցները։

57. Տարեկան հաշվետվությամբ յեղած վնասները փայատիրական և հիմնական ֆոնդերով ծածկելու դեպքում, փայատերերի ընդհանուր ժողովը (լիազորների ժողովը) սահմանում է այդ ֆոնդերը վերականգնելու կարգը և ժամկետները։

## VII. ԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

58. Գյուղկոոպը դադարեցնում է իր գործունեյությունը փայատերերի ընդհանուր ժողովի (լիազորների ժողովի) վորոշմամբ որենքով սահմանված կարգով։

ԳՐԱԴԱՐԱՆ

9 АПР 1939
179
1
3673